

տարբերությունը, միև կողմէն սակայն, կը յառաջանար երկու ոլորտներու միջ-նորոգութեան պահանջ մը: Նկատի ունենալով *աստուծոյ* կամ *աստուածայինի* անդրանցականութիւնը (Transcendence) եւ անոր աշխարհի հետ անմիջական յարաբերութիւն ունենալու *կարծեցեալ անհաւանականութիւնը*, աստուծոյ կողմէ, հետեւաբար անկէ կախեալ միջնորդական ուժեր ներկայացան, որոնք միակ աստուծոյ եւ բազմազան նիւթականին միջեւ կապ պիտի հաստատէին:

Նմանօրինակ միջնորդական ուժերու պատկերացումները հեշտութեամբ կարելի էր նոյնացնել *դէի*²⁷ (Demon) եւ *հրեշտակի*²⁸ (Angel) գաղափարներուն հետ:

Եթէ դասական փիլիսոփայական բարոյագիտութիւնը (Էթիկան, Ethics) խոստացած էր, մարդը ազատել իրականութեան ճնշումէն, ուշ Հնադարուն, աստուածիմաստութիւնը (Theosophy) ցոյց կու տար փրկութեան ճամբան.- փրկութիւն՝ նիւթական աշխարհէն, ցաւէն ու տառապանքէն, ինչպէս նաեւ երկրային սիրոյ փորձութիւններէն ու երկրային իշխանութեան գայթակղութիւններէն: Հարմանալի չէ, որ նիւթական աշխարհը կ'ընկալուէր՝ որպէս չարի աղբիւր եւ նիւթը՝ որպէս չարութեան սկզբունք: Ասոր որպէս հետեւանք, թէ՛ ասոդենական երկրային երջանկութիւնը եւ թէ երկրային կապերը արմատական մերժման կը հանդիպէին, տեղ բանալով անդենական երջանկութեան մը ու անդենական նպատակներուն:

Փիլիսոփայութիւնը, ինչպէս Հնադարու իր սկզբնական շրջանին, նոյնպէս Հնադարու վերջաւորութեան հետապնդած է շատ գործնական նպատակներ: Ժամանակի ընթացքին, սակայն, նպատակները փոփոխութեան ենթարկուած են: Մինչ սկիզբնական շրջանին, փիլիսոփայութիւնը հետաքրքրուած էր լոկ ասոդենական հարցերով ու երկրային կեանքի դժուարութիւններու յաղթա-

27 ԴԵԼ (Demon).-

Դելի յունարէնը՝ *daímōn* է, որ կը նշանակէ «ոգի» եւ կը ներկայանայ որպէս գերբնական արարած: Կարելի է զանազան մշակոյթներու առասպելներու, կրօններու եւ խորհրդապաշտական ուսմունքի մէջ հանդիպիլ «*բարի*» եւ «*չար*» ոգիներու: Յունական դասական փիլիսոփաներու մօտ, Դելը կը ներկայանայ նաեւ որպէս՝ «*ներքին ձայնը*» կամ «*խիղճը*»: Քրիստոնէութեան համաձայն, դելը՝ չար արարած կամ նոյնիւնքն սատանան է: Դելերու մասին ուսմունքը կը կոչուի՝ *դիաբանութիւն* (Demonology):

28 Հրեշտակ (Angel).-

Հրեշտակի յունարէնը՝ *ángelos* է, որ կը նշանակէ սուրհանդակ կամ պատգամաբեր: Կարելի է հանդիպիլ միաստուածեան 3 կրօններու (Յուդայականութիւն, Քրիստոնէութիւն եւ Իսլամութիւն) մէջ, որպէս Աստուծոյ կողմէ արարուած գերբնական, ոգեղէն ու թեւաւոր էակներ: Կարելի է գտնել նաեւ զանազան մշակոյթներու (Իրան/Պարսկաստան, Միջագետք եւ Եգիպտոս) տարբեր առասպելներու եւ կրօններու մէջ: Հրեշտակները ընդհանրապէս բարի են եւ պարտականութիւն ունին Աստուծոյ հրահանգները կամ պատգամները մարդոց փոխանցելու: Անոնք նաեւ կը ստանձնեն պահապանի դերը (պահապան-հրեշտակ):

Հրեշտակներու մասին ուսմունքը կը կոչուի՝ *հրեշտակաբանութիւն* (Angelology):